Տիկին Այդա Բաղրամեան երգեց «Կարօտ»ը կամ «մարտիկի երգ»ը:

Ապա աբբահայր Հ. Պօղոս Գոճանեան ըսաւ իր փակման խօսքը՝ շնորհակալութիւն յայտնելով բոլոր անոնց, որ իրենց ներկայութեամբ եւ մանաւանդ գործօն մասնակցութեամբ՝ հանդէսի յաջողութեան նպաստեցին:

Այնուհետեւ ներկաները հաւաքուեցան վանքի բակը, ուր ճոխ հիւրասիրութեամբ եւ բարձր տրամադրութեամբ տօնական մթնոլորտը վայելեցին մինչեւ ուշ երեկոյ:

Սեպտեմբեր 11-ին, կիրակի ժամը ճիշտ 11-ին սկսաւ հանդիսական սուրբ պատարագը վանքի եկեղեցւոյ մէջ: Ներկաները գրեթէ նախորդ օրուան հիւրերն էին: Պատարագեց Վիեննայի վանքին աբբահայրը՝ Հ. Պօղոս Գոճանեան: Երգչախումբը մեծ յաջողութեամբ երգեց Եկմալեանի արական ձայնի համար պատրաստած եռաձայն պատարագը՝ ղեկավարութեամբ Տիկին Կարինէ Ժամկոչեան-Սիմոնեանի եւ Երգէոնի ընկերակցութեամբ Տիկին Իլոնա Փեթէօչի: Օրուան պատշաճ տպաւորիչ քարոզը խօսեցաւ Վիեննայի թեմին ձեռնադրիչ եպիսկոպոս Հելմութ Քրեցըլ, որ ծնած ըլլալով Մխիթարեան վանքի մօտ եւ դրոշմուած՝ Հապզեան աբբահօրմէ, մանկութեան տարիներէն միշտ կապը պահած է վանքին հետ: Օտար հաւատացեալներէն շատեր, որ առաջին անգամ ըլլալով ներկայ եղած էին հայ պատարագի, խորապէս տպաւորուած էին հայ ծէսի գեղեցկութեամբ: Պատարագէն վերջ ժողովուրդը նորէն հիւրասիրուեցաւ վանքի բակը, ուր երկար մնացին վայելելով նաեւ Սեպտեմբերի համար անսովոր գեղեցիկ օդը:

ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔ

Հրանոյշ Յակոբեան

Հոգեւոր հայրե՛ր, գիտաժողովի յարգարժան մասնակիցնե՛ր, հիւրե՛ր,

Ողջունում եմ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան 200-ամեակին նուիրուած գիտաժողովի մասնակիցներին, սիրով եւ հպարտութեամբ շնորհաւորում եմ բոլորիս այս հրաշալի յոբելեանի առթիւ, մաղթում լուսանորոգ ու բեղմնաւոր գիտական, ստեղծագործական ճանապարհներ մխիթարեան հայրերին, որպէսզի շարունակեն ոգով ու ջանադրութեամբ հայ մշակոյթը զարգացնելու եւ աշխարհին ճանաչելի դարձնելու իրենց պատրաստակամութիւնը:

Ուզում եմ խոնարհուել բոլոր այն հոգեւոր հայրերի յիշատակի առջեւ, ովքեր նուիրումի, մեծ տքնանքի ու մաքառումի գնով կերտեցին այն բարձր մշակոյթի աշխարհը, որ կոչւում է Մխիթարեան միաբանութիւն:

Հպարտութեամբ պիտի արձանագրենք, որ Մխիթարեան միաբանութիւնը մի զարմանալի, բացառիկ երեւոյթ է ոչ միայն հայ, այլեւ համաշխարհային մշակոյթի պատմութեան մէջ: Ո՞րն է գաղտնիքը, որ մի խումբ տարագիր հոգեւորականներ դարեր շարունակ շահում են Հռոմի պապերի, Եւրոպայի ամենազօրաւոր միապետների ու իշխանաւորների համակրանքն ու բարեհաճութիւնը եւ եւրոպական արժէքների տիրոյթում հաստատում են հայկական մշակոյթը, որն իր ուրոյն տեղն ու դերն է գրաւում՝ դառնալով այն կենսաբեր զարկերակներից մէկը, որով Հայաստան աշխարհը միանում է համաշխարհային մշակոյթին:

Այդ հարցին դիպուկ պատասխանում է մեծ բանաստեղծ Ջորջ Բայրոնը. «Այս մարդիկ (Մխիթարեանները) հարստահարուած եւ բարձրատոհմ մի ազգի կրօնաւորներն են, ազգ, որ հրեաների եւ յոյների պէս տարագիր է եղել՝ առանց առաջինների ինքնամեկուսացման եւ վերջինների ստրկամտութեան: Այս ժողովուրդը հարստացել է առանց բանսարկութեան»:

Յարգելի ներկանե՛ր,

Որո՞նք են այն մեծագոյն ներդրումները, որ իրենց հոգեւոր-մշակութային օջախը 200 տարի առաջ կառուցելով Եւրոպայի սրտում՝ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան տաղանդաշատ ու ազգանուէր հոգեւորականները կատարեցին: Նախ՝ նրանք իրենց արգասաւոր գործունէութեամբ հայ ժողովրդին հաղորդակից դարձրին եւրոպական արուեստին ու գրականութեանը, կառուցեցին նորանոր հոգեւոր կամուրջներ՝ ուղղորդելով հայկական մշակոյթը դէպի արեւմտեան արժեհամակարգ:

Դարեր շարունակ հայ հոգեւորականները ստեղծել են ամայի աւերակները, անապատները ծաղկուն կրթամշակութային օջախների, վանական համալիրների վերածելու բացառիկ պատմութիւն: Այդպէս էլ երեք դար առաջ Ներսէս Շնորհալու արժանի ժառանգորդը՝ Մխիթար Սեբաստացին, իր մի խումբ միաբաններով, Վենետիկի փոքրիկ կղզին՝ Սուրբ Ղազարը, որն ընդամէնը բորոտների մեկուսարան ու դարմանատեղ էր, մաքրագործեց աստուածային լոյսով եւ վերածեց մի իւրայատուկ ոգեղէն Հայաստանի՝ կեանքի կոչելով Մխիթարեան միաբանութեան կարգախօսը՝ «Ի փառս Աստուծոյ եւ յանուն լուսաւորութեանն ազգի մերոյ»:

Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնում նոյնպէս ամէն ինչ եղել է հայկական, համակուած հայ ոգով եւ ամէն ինչ արուել է հայ անունի համար: Ինչպէս մեծ ռահուիրան՝ Մխիթար Սեբաստացին է բնորոշում, այստեղ էլ տիրում էր նոյն «հայրենաշունչ մթնոլորտը՝ Աղօթքի հետ՝ աշխատանք, առաքինութեան հետ՝ հայրենասիրութիւն, հաւատքի հետ՝ գաղափարական սեւեռակէտ, եւ միշտ Հայաստան, ամէն ինչ Հայրենիքի համար, հայ ժողովուրդի համար... »:

Երկու դար առաջ Միաբանութեան ներքին հակադրութիւնների պատճառով հոգեւորականների մի մասը Վենետիկից հեռացաւ եւրոպական բարձր քաղաքակրթութեան մէկ այլ բնօրրան՝ Աւստրիա: Սուրբ Ղազարի ֆենոմենը իւրովի կրկնուեց ու զարգացաւ նաեւ Վիեննայում, եւ Հայրենիքից դուրս հայ ժողովրդի կրթութեան, լուսաւորութեան, հայագիտութեան զարգացման դպրոցն ընդլայնեց իր աշխարհագրութիւնը: Ձեւաւորուեցին ինքնակազմակերպման, հիւրընկալ երկրի միջավայրին ու մշակոյթին ինտեգրուելու, բուռն ստեղծագործական գործունէութեամբ, հայագիտութեան զարգացման շնորհիւ իրենց ազգային ինքնութիւնն ամրապնդելու աւանդոյթները, կենսափիլիսոփայութիւնը, որոնք էլ յետագայում դարձան սփիւռքահայ մշակոյթի հիմնաքարերը:

Հայ մշակոյթի մեծ երախտաւոր Արշակ Չօպանեանն այսպէս է բնութագրում միաբանութեան դերը. «Հայկական ոչ մի հաստատութիւն այնքան խորունկ ու տեւական ազդեցութիւն չի ունեցել հայութեան վրայ, արեւմտեան ոգին, ճաշակն ու ազնիւ բարքերը մեր մէջ տարածելու տեսանկիւնից, որքան Մխիթարի տունը»:

Միաբանութիւնն ու նրա հեռատես անդամներն ի սկզբանէ զուգորդեցին արտաքին հարկադրանքն ազգային շահերի պաշտպանութեան հետ՝ ապացուցելով, որ կաթոլիկական դաւանանքին հետեւելը չի կարող խանգարել սեփական ժողովրդի կրթութեանն ու լուսաւորութեանը, մտաւոր զարգացմանը ծառայելուն: Եւ հակառակը՝ հայ մշակոյթին ծառայելը չի կարող վնասել կաթոլիկութեանը: Միաբանութիւնը կարողացել է դրսեւորել քաղաքական մտածողութիւն, դիւանագիտական նրբանկատութիւն՝ միաժամանակ կատարելով հայ իրականութեան պահանջը, եւ մտերիմ յարաբերութիւններ ունենալ Հաբսբուրգների արքունիքի հետ, որը փոխշահաւէտ էր: Մխիթարեանները Արեւելքում նպաստում էին նրանց հեղինակութեան բարձրացմանը, իրականացնում էին արքունիքին անհրաժեշտ տպագրական, հրատարակչական աշխատանքներ: Սակայն քաղաքական զարգացումների, յեղափոխութիւնների, պատերազմների ժամանակ այդ մտերմութիւնը յաճախ է վտանգել միաբանութեանը:

1770-ական թթ. Աւստրիայի կայսրուհի Մարիա Թերեզան նրանց եւ Տրիեստում ապրող հայկական համայնքին շնորհում է յատուկ արտօնութիւն՝ բնակուելու Հաբսբուրգների կայսրութիւնում: 1775 թ. կայսրուհին յատուկ արտօնագիր է տրամադրում Մխիթարեան միաբանութեանը, որով ճանաչւում է վերջինիս կրօնական կարգը, միաբանութեանը տրւում է նաեւ յատուկ տարածք: Վանականները կառուցում են իրենց նոր եկեղեցին, դպրոցը, տպագրատունը:

1797 թ. Նապոլէոն Բոնապարտի ղեկավարած զօրքերը գրաւում են Տրիեստը: Ի տարբերութիւն Վենետիկի Մխիթարեան միաբանութեան, Վիեննայի Մխիթարեանների հանդէպ Նապոլէոն Բոնապարտը բաւականին անբարեհաճ է գտնւում: Հաբսբուրգների տուած արտօնութեան պատճառով Նապոլէոնը Մխիթարեաններին եւ Տրիեստի հայկական համայնքի բոլոր ներկայացուցիչներին ստիպում է լքել քաղաքում ունեցած իրենց կալուածքները:

Դարձեալ տեղափոխութիւն, դարձեալ նոր սկիզբ: Ոչինչ սակայն չի ընկճում նրանց: Մխիթարեան միաբանները որոշում են հաստատուել Վիեննայում: Կայսր Ֆրանց Ա-ի՝ 1810 թ. դեկտեմբերի 5-ի հրամանով Վիեննայում ընդունում են վտարուած վանականներին: 1811 թ. յունիսի 8-ին Աւստրիայի կայսրը պաշտօնապէս ճանաչում է միաբանութեան գոյութիւնը եւ վանականներին յատկացնում Սուրբ Ուլրիխի թաղամասի ծայրամասում գտնուող նախկին Կապուչին վանքը:

Վիեննայի միաբանութեան ազդեցութեամբ աւստրիացի գիտնականներն զբաղուել են հայ մշակոյթի խնդիրներով: Ճարտարապետութեան բնագաւառի արուեստագէտ Յոզեֆ Ստրժիգովսկին 1918 թ. հրատարակել է «Հայերի ճարտարապետութիւնը եւ Եւրոպան» երկհատոր կոթողային աշխատութիւնը, Վիեննայի համալսարանի ազգագրութեան մասնագէտ Էլիզաբեթ Բաուեր-Մանդորֆը, հայոց լեզու սովորելով Մխիթարեան միաբանութիւնում, 1975 թ. հրատարակել է «Հայաստան. պատմութիւնը եւ մշակոյթը», «Վաղ շրջանի Հայաստանը» աշխատութիւնները, Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Վոլֆ Դիտերբիլը մի շարք յօդուածներ է նուիրել հայ եկեղեցուն եւ Հայկական հարցին, իրաւաբան, Աւստրիայի ակադեմիայի թղթակից անդամ Ֆելիքս Էրմակորան (Հայկական հարցին նուիրուած մի շարք յօդուածների հեղինակ), գիտականօրէն հիմնաւորելով Օսմանեան Թուրքիայի կողմից իրականացրած ոճիրը, այն որակել է ցեղասպանութիւն, իսկ Ֆրանց Վերֆելն իր «Մուսա լեռան քառասուն օրը» վէպով, որպէս օտար հեղինակ, աշխարհին ներկայացրեց հայ ժողովրդի պայքարի եւ ազատագրական ոգու մի դրուագ եւ ընդմիշտ կապուեց հայ ժողովրդին՝ դառնալով հայ-աւստրիական բարեկամութեան խոհրդանիշը:

Զափազանց կարեւոր է այն հանգամանքը, որ միաբանութիւնը, լինելով հոգեւոր կենտրոն, ծառայելով քրիստոնէական արժէքներին՝ շարունակում եւ զարգացնում է նաեւ նախորդների աւանդները Էկումենիկ՝ միջեկեղեցական յարաբերութիւնների զարգացման բնագաւառում՝ համերաշխութիւն, սէր ու եղբայրութիւն է քարոզում, պայքարում է լատինամէտների օտարացման ու մեկուսացման դէմ:

Միաբանութեան գլխաւոր գործառոյթներից մէկը նուիրուած էր երիտասարդ սերնդի կրթութեանն ու դաստիարակութեանը: Խոնարհումի ու յարգանքի է արժանի աշխարհի տարբեր երկրներում միաբանութեան իրականացրած, բարձր կազմակերպուածութեամբ օժտուած ու համակարգուած կրթական գործունէութիւնը, որի շնորհիւ մխիթարեանների ազգանուէր ոգով կրթուել ու դաստիարակուել են բազում սերունդներ՝ նպաստելով բազմաթիւ անհատականութիւնների, գիտնականների ու արուեստագէտների կայացմանը: Բոլոր ժամանակներում Մխիթարեան կրթօջախի սան դառնալը նշանակել է զինուորագրուել հայապահպանութեանը, լինել արժանապատիւ հայ եւ անհատականութիւն, միաբանութեան կրթօջախի շրջանաւարտ լինելը հպարտութեամբ է լցրել իւրաքանչիւրի հոգին, իսկ դիմացինի մէջ արթնացրել է յարգանքի ու համակրանքի մի արդարացի, բնական զգացողութիւն:

Վիեննա ժամանելուց չորս տարի անց Մխիթարեանները կարողանում են բացել վանքին կից ժառանգաւորաց դպրոց: 1814 թ. նրանք ձեռք են բերում բաւարար ֆինանսական միջոցներ՝ վանքի գոյքը գնելու համար, որը մինչ այդ վարձակալում էին:

Միաբանութիւնն ունեցել է եւ՛ մեծ ձեռքբերումներ, եւ՛ կորուստներ: Արքեպիսկոպոս Արիստակէս Ազարեանի ղեկավարման տարիները դարձան Վիեննայի Մխիթարեանների «ոսկէ դարը»: Կառու-

ցուեցին նոր շէնքեր եւ եղան գիտական նշանակալի ձեռքբերումներ: Հիմնադրւում է հայ լեզուաբանութեան դպրոցը, որն իր ձեռքբերումներով ժողովրդական եւ միջազգային ճանաչում է ձեռք բերում: 1837 թ. հոկտեմբերի 18-ին կայսր Ֆերդինանդ Ա-ն եւ նրա կինը՝ կայսրուհի Մարիա Աննան, տեղադրում են Մխիթարեանների նոր կառուցուող վանքի անկիւնաքարը: 1835 թ. Սուրբ Ուլրիխում տեղի ունեցած հրդեհը մեծ աւերածութիւններ գործեց, բայց վանքը դարձեալ վերականգնուեց:

Բարձր արուեստների մայրաքաղաք Վիեննայում հանգրուան գտած միաբանութիւնը ծաւալում է լայն հայագիտական գործունէութիւն:

Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնը 1773 թ. ի վեր աշխարհի տարբեր ծայրամասերում՝ Եւրոպայում, Աֆրիկայում, Ասիայում եւ Հիւսիսային Ամերիկայում ունեցել է 45 մասնաճիւղ: Այս մասնաճիւղերն իրենց մէջ ներառում էին ինչպէս ժառանգաւորաց դպրոց-վարժարաններ, այնպէս էլ հոգեւորականների նստավայրեր: Համաշխարհայնացումն ու ուծացման վտանգը սպառնում է նաեւ Վիեննայի միաբանութեանը: Յաւօք, այսօր Մխիթարեան միաբանութեան 30 վարժարաններից ընդամէնը 8-ն է գործում:

Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնն իր գոյութեան ընթացքում եղել եւ շարունակում է մնալ հայագիտութեան զարգացման առաջատար կենտրոն՝ մեծապէս նպաստելով հայապահպանութեան սուրբ գործին:

Անգնահատելի են Մխիթարեան հայրերի՝ հայագիտութեանը մատուցած ծառայութիւնները լեզուաբանութեան, աշխարհագրութեան, ազգագրութեան, գրականութեան, կրօնական ու աշխարհիկ պատմութեան ու գրականութեան, եկեղեցական ու հասարակական այլ գիտութիւնների ասպարէզում:

Աճառեանը Վիեննայի Մխիթարեանների գործունէութիւնը համարում է խիստ հոյակապ մի գործ, միջազգային ակադեմիական լաւագոյն ծրագրերի շարքում, հումանիստ կրօնաւորական ազգային շարժում, հայկական եւ արեւմտեան մշակոյթների փոխադարձ ճանաչման բուռն առաջընթաց:

Մի ազգ, որ օտար երկրում կարող էր այսպիսի բացառիկ մշակոյթ ստեղծել, երբեք չպէտք է յուսահատուի:

Վիեննայի Մխիթարեան հայրերը շարունակեցին արդէն ձեւաւորուած աւանդոյթները եւ իրենց գրական, գիտական մանկավարժական, քարոզչական գործունէութեամբ զգալի դերակատարութիւն ունեցան հայագիտութեան եւ հայ մշակութային կեանքի յետագայ վերելքի գործում: Մխիթարեան միաբանութեան անդամները, ձեռնամուխ եղան գիտաքարոզչական աշխատանքի՝ հաւաքելով, ուսումնասիրելով եւ հրատարակելով հին հայկական ձեռագրեր, կատարելով բարձրարժէք թարգմանութիւններ, եւրոպական ժողովուրդներին ծանօթացնելով այդ գանձերին: Այժմ էլ Վիեննայի Մխիթարեան հայրերը շարունակում են իրենց հայանպաստ բեղմնաւոր գործունէութիւնը:

Իր գործունէութեան բոլոր բնագաւառներում միաբանութիւնն իրականացրել է խիզախ ծրագրեր, նոր ուղիներ է բացել, իր ձգտումների ու իրագործումների մէջ եղել է հեռատես, ամենայուսաբեկ իրավիճակներում անգամ երբեք չի դադարել կեանքին նայել վերանորոգ յոյսով:

Հարուստ պատմութիւն կերտած այս կառոյցը եւս վկայում է, որ ինչ ծանր պայմաններում ու իրավիճակներում էլ յայտնուել է հայ ժողովուրդը, կարողացել է ապրել, արարել եւ ստեղծագործել:

ԺԹ. դարի սկզբներին Վիեննայի հայ գաղութն այնքան մարդաշատ է եղել, որ Մխիթարեան աբբահայրերը հայ երեխանե-

րի համար բացել են գիշերօթիկ դպրոց, հիմնել տպարան, լոյս ընծայել դասագրքեր, ամսագրեր, որոնցից «Հանդէս ամսօրեայ»-ն (հիմնադրուել է 1887 թ.) լոյս է տեսնում ցայսօր:

Վիեննայի միաբանութիւնը երկու դար շարունակ, լոյս ու իմաստութիւն է սփռել, նպաստել մեր մշակոյթի ծաղկմանն ու առաջընթացին, եղել է հայագիտութեան, ազգային ինքնութեան գիտական հիմնաւորման, հայ մշակոյթը համաշխարհային արժեհամակարգին, մասնաւորապէս՝ եւրոպական մշակոյթին ինտեգրելու դարբնոցն ու կենտրոնատեղին: Նրանք մշակութային համագործակցութեան աւանդոյթները շարունակեցին ու զարգացրին նոր տրամաբանութեամբ ու նոր լոյսի ներքոյ՝ նաեւ տպագրական, հրատարակչական գործունէութիւն ծաւալելով:

1811-1812 թթ. Վիեննայի Մխիթարեան միաբանութեան տպարանը գործել է մինչեւ 1999 թ., ուր յիսուն լեզուներով տպագրուել է շուրջ 2000 անուն գիրք:

Իր անդամների գիտական աշխատանքները հրատարակելու եւ տարածելու համար միաբանութիւնը միշտ օգտւում էր սեփական մամուլից: Վանականների գիտական յօդուածները յաճախ յայտնւում էին միաբանութեան «Եւրոպա» հայկական շաբաթաթերթում, որը տպագրւում էր 1847-1863 թթ.: «Եւրոպա» շաբաթաթերթն առաջին անգամ հրապարակեց հայոց լեզուի հիմնական քերականական կանոնները: 1863 թ. «Եւրոպան» դադարեց հրատարակուել եւ, որպէսզի աբբահայրերը տպագրեն իրենց գիտական յօդուածները, արքեպիսկոպոս Արսէն Այդինեանը 1887 թ. յունուարին նախաձեռնեց միաբանութեան նոր հայալեզու ամսագրի՝ «Հանդէս ամսօրեայ»-ի հրատարակումը:

Վիեննայի միաբանութիւնը դարձաւ իւրօրինակ թանգարան իր հաւաքածոյով: Վիեննայի հայրերը եւս շարունակեցին եւ զարգացրեցին մարդկային բարձր քաղաքակրթութեան օրրանում՝ Աւստրիայում ու համայն աշխարհում հայ ազգի պատիւը բարձր պահելու իրենց նախորդների լաւագոյն աւանդոյթները:

Հայ ժողովուրդը ճակատագրի բերումով յայտնուել է եւրոպական եւ ասիական քաղաքակրթութիւնների հատման կէտում. թերեւս այստեղից են բխում մեր ազգային ինքնութեան երկուութիւնը եւ դրա հետ կապուած բարդութիւնները, առաւելութիւններն ու թերութիւնները: Մխիթարեան միաբանութիւնն իր գործունէութեամբ կառուցեց հիմնաւոր ճանապարհ դէպի եւրոպական արժեհամակարգ եւ ինքը դարձաւ հայ ժողովրդին Արեւելքից Արեւմուտք ուղղորդող մշակութային մի զօրաւոր կամուրջ:

Այստեղ են գտնւում հայերէն թերթերի ամենամեծ հաւաքածոն, հարուստ գրադարանը եւ ձեռագրատունը, որտեղ ամփոփուած են մօտ 3000 հնագոյն հայկական ձեռագրեր, եւ միջնադարեան նկարազարդած մեծարժէք մատեանները: Միաբանութեան թանգարանում պահւում են հայկական եւ համաշխարհային մշակոյթի բարձրարժէք ստեղծագործութիւններ, ինչպէս նաեւ հայկական հին դրամների ամենամեծ հաւաքածոն, օտարերկրեայ 30 հազար դրամների հարուստ հաւաքածոն: Միաբանութիւնում կան Նաղաշների ընտանիքի, Այվազովսկու, Մախոխեանի, Ջիւանեանի, Բաշինջաղեանի եւ այլ յայտնի ու անյայտ նկարիչների գործեր, արտասահմանեան յայտնի նկարիչների՝ հայկական եւ այլ թեմաներով ստեղծագործութիւններ:

Միաբանութիւնում պահւում են նաեւ յախճապակէ իրերի՝ մասնաւորապէս Քեօթահիայի հայկական յախճապակիների ընտիր նմուշներ եւ հայկական գորգերի հարուստ հաւաքածոներ:

Խորհրդանշական է, որ այստեղ է գտնուում Հայաստանի առաջին հանրապետութեան առաջին եռագոյն դրօշը:

Միաբանութեան թանգարանում ցուցադրուած են նաեւ համաշխարհային մշակութային արժէքներ: Այնտեղ է գտնուում եգիպտական մումիա՝ իր սարկոֆագով, որի վրայի նկարազարդումն իր պահպանուածութեան որակով աշխարհում լաւագոյններից մէկն է: Մումիան շուրջ 4,5 հազար տարեկան է: Կայ նաեւ եգիպտական սրբազան կատուի մումիա, որը պատկանում է Ք.ա. 2-րդ հազարամեակին:

Ներկայումս գրադարանում կայ մօտ 270.000 ցուցանմուշ, որոնցից 40.000-ը հայկական. դրանով իսկ այն հանդիսանում է Վիեննայի ամենամեծ գրադարաններից մէկը:

Այսօր վտանգուած է գիտութեան, կրթութեան ու բարձր մշակոյթի այս հրաշակերտ տաճարի շարունակականութեան հարցը, կառոյց, որը հայ եւ համամարդկային մշակոյթին պարգեւեց նուիրեալ գործիչների մի ամբողջ բանակ: Ձկան ահռելի պատմամշակութային ժառանգութիւնը պահպանելու բաւարար պայմաններ: Վստահ եմ, որ միայն Հայոց պետութիւնը, օգտուելով իր սահմանադրական իրաւունքից եւ բարոյական ու ազգային պարտաւորութիւններից, կարող է յաւուր պատշաճի օգնել միաբանութեանը՝ լուծելու ծագած հիմնահարցերը: Սփիւռքի նախարարութիւնը պատրաստ է իր բոլոր հնարաւորութիւններն օգտագործել եւ աջակցել, սատար կանգնել համամարդկային եւ ազգային բարձր արժէք եւ մեծ դերակատարութիւն ունեցող Մխիթարեան միաբանութեանը, պահպանել ու պաշտպանել այն զօրաւոր մշակութային աշխարհը, որ երկու դարի ընթացքում, կեանք ու հոգի ներդնելով, ստեղծել են մխիթարեան հայրերը:

Անշուշտ, շատերն են ուսումնասիրել Վիեննայի Մխիթարեան միաբանութեան գործունէութիւնը, գրուել են աշխատութիւններ, կազմակերպուել են գիտաժողովներ, հրատարակուել են գրքեր, սակայն, կարծում եմ՝ այս գիտաժողովը 200-ամեայ հեռաւորութիւնից նոր լոյսի ներքոյ, նաեւ Հայրենիք-Սփիւռք գործակցութեան տեսանկիւնից է վերաարժեւորելու միաբանութեան բազմավաստակ գործունէութիւնը: Վստահ եմ, որ գիտաժողովը կը ներկայացնի եւ կ'օգնի բացայայտել միաբանութեան, նրա պատմամշակութային ժառանգութեան պահպանման հետ կապուած խնդիրները, կը փորձենք որոնել ու գտնել դրանց լուծման ուղիներն ու կառուցակարգերը:

Թոյլ տուէք եւս մէկ անգամ շնորհաւորել եւ գիտաժողովին մաղթել արդասաւոր ընթացք:

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Պատմական ակնարկ)

Հ. Պօղոս Գոճանեան

Յայտնի իրողութիւն է, որ հայ ժողովուրդի պատմութեան վերջին 300 տարիներուն Մխիթարեան Միաբանութիւնը մեր ազգային մշակոյթի զարգացման մէջ անգնահատելի դեր կատարած է:

Մխիթարեան Միաբանութիւնը միայն կրօնական հաստատութիւն չէ: Անոր հիմնական նպատակը եղած է եւ է՛ մեր ժողովուրդի հոգեւոր ու մտաւոր զարգացումը: Մխիթար Սեբաստացի հիմնած է իր Միաբանութիւնը ի՛ր իսկ բառերով՝ «Ի հոգեւոր օգուտ՝ եւ ի լուսաւորութիւն ազգին մերոյ Հայկազնոյ»: Ինքը Մխիթար, ինչպէս նաեւ իր հետեւորդները ծառայած են այդ նպատակին:

Այժմ, պատմական թռուցիկ ակնարկով մը պիտի փորձեմ, որչափ կարելի է, տալ ուրուագիծ պատկեր մը մխիթարեան միաբանութեան եւ յատկապէս Վիեննակա՛ն ճիւղի մշակութային գործունէութեան:

15-րդ, 16-րդ եւ 17-րդ դարերը ծանօթ են որպէս մեր ազգի պատմութեան մութ էջերը: Պետականութենէ զրկուած եւ պատմական Հայաստանի սահմաններէն ներս ու դուրս ցիրուցան՝ հայ ժողովուրդը կ'ապրէր երկու օտար, իսլամական կայսրութիւններու մէջ: Ոսումնական կեանքը նոյնիսկ վանքերու մէջ, որ մեր մշակոյթի միակ վայրերն էին, գրեթէ մարած էր: Թանձր փոշին նստած էր գիրքերու վրայ, ինչպէս կը գրէ ժամանակակից պատմիչը՝ Առաքել Դաւրիժեցի:

Այդ մութ ժամանակաշրջանի վերջաւորութեան՝ 1676 թ. ծնաւ Միաբանութեանս հիմնադիրը՝ Մխիթար Սեբաստացի կամ Մխիթար Աբբահայր: Դպրոցներ չկային այդ ժամանակ Սեբաստիայի մէջ: Քահանայ մը սորվեցուց երեխային կարդալ ու գրել: Ուրիշ բան չունէր քահանան անոր տալու: Եւ այդ միակ ուսուցիչն էր, որ ունեցեր է Մխիթարը իր կեանքին մէջ: 14 տարեկան պատանին ընդունուեցաւ Ս. Նշան վանքը: 17 տարեկանին սկսաւ թափառիլ վանքէ վանք, քաղաքէ քաղաք՝ գտնելու տեղ մը, ուր կարենար ուսում ստանալ: Ան ամէն տեղ յուսախաբութիւն ապրեցաւ: Փորձեց երթալ Եւրոպա, բայց Կիպրոսի մէջ հիւանդութիւն մը ստիպեց զինք ետ վերադառնալ:

Մխիթար տեսաւ նաեւ հայ վանքերերու անկեալ վիճակը: Կրօնաւորական կեանքը շատերուն համար դարձեր էր աւելի արտաքին երեւոյթ, ծիսակատարութիւն. կը պակսէր հոգին: Նախանձ եւ հակառակութիւն կը խանգարէին վանական կեանքը: Մխիթար այդ չարիքի արմատը տեսաւ վանականներու տգիտութեան կամ անբաւարար կրթութեան եւ ուսման հանդէպ անտարբերութեան մէջ: Այդ տխուր փորձառութենէն մտքին մէջ գաղափարը ծագեցաւ նոր վանք կամ միաբանութիւն մը հիմնելու՝ ազգը լուսաւորելու համար, կամ իր իսկ բառերով՝ «Ի հոգեւոր օգուտ եւ ի լուսաւորութիւն ազգին մերոյ հայկազնոյ»:

Երկար ճամբորդութիւններէ եւ մեծ դժուարութիւններէ յետոյ վերջապէս Մխիթար յաջողեցաւ հիմնել իր Միաբանութիւնը Պոլիս, 1701-ին, երբ տակաւին 25 տարեկան էր: Այդ ժամանակ Պոլսոյ մէջ սաստկացեր էին դաւանական վէճերն ու կռիւները լուսաւորչական եւ կաթողիկէ հայերու միջեւ, որուն հետեւանքով պաշտօնական բաժանում պիտի յառաջանար